Doi: 10.56737/2953-7843-2025.01-116

ԼՅՈՒՍԻՆ ՄԱՄՅԱՆ
ՃՇՀԱՀ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԻՏԱԼԻԱՅԻ ՀՅՈՒՍԻՍՈՒՄ. ՄԻԼԱՆԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍԲ ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՁԵՌԱԳՈՅԱՑՈՒՄԸ Ի. ԴԱՐՈՒՄ[1]

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հոդվածում քննության են առնվում Հյուսիսային Իտալիայում հայերի ներկայության ժամանակագրական փուլերը, նյութի հետ կապվող պատմամշակութային եւ փաստացի վկայությունները՝ արձանագրություններ, մետաղադրամներ, չափածո տողեր, ինչպես նաեւ հայ եւ իտալացի գիտնականների՝ հայ-իտալական ճարտարապետական առնչություններին վերաբերող հետազոտությունները։

Ուսումնասիրությունը կատարված է պատմափաստագրական եղանակով։ Հայերի հայտնվելը Լոմբարդիայում դիտարկվում է որպես հետագա ներգաղթը խթանող նախապայման։ Հոդվածի գիտական խնդիրն է մեկտեղել եւ վավերացնել Ի. դարասկզբի այդ գաղթային հոսքերի արդյունքում Միլանում առաջացած հայապատկան կամ հայկականությանն առնչվող որոշ կառույցներ։ Քննարկվում է դրանցից կարեւորագույնը՝ Միլանի հայկական առաքելական Սուրբ Քառասուն մանկունք եկեղեցին, որն իր տեսակի մեջ միակն է Իտալիայում։

Շինությունը վերլուծության է ենթարկվել փաստագրորեն՝ Ի. դարի պատմական իրադարձությունների հետնախորքի վրա, հնչեցվել է նրա կառուցման հետ կապված հասարակական արձագանքը։ Դիտարկվել են կառույցի՝ միջնադարյան հայկական եկեղեցաշինությանը բնորոշ կա-

[1]* *Ստացվել է՝ 5.04.2024, գրախոսվել է՝ 10.04.2024։ Էլ. հասցե՝* lusarx66@gmail.com:

ուցվածքային սկզբունքները, միջավայրին ներ դաշնակեցնելու ճարտարապետական եւ գեղագիտական ձեւակերտումները։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայերի եւ Միլանի առնչության վերաբերյալ պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ։ Դեռեւս Բ. դարում Հռոմի կայսեր Մարկոս Ավրելիանոսը, ի նշանավորումն հայերի եւ պարթեւների դեմ տարած հաղթության, մետաղադրամ է հատում, որի երեսին իրեն անվանում է հայերի կամ Հայաստանի թագավոր[2]։ Այս հիշատակությունը պահպանվել է Միլանի Սան Լորենցո եկեղեցու վիմագիր արձանագրության մեջ[3]։ Եւս մի պատմական իրողություն. Լոմբարդիայի Պավիա քաղաքի եպիսկոպոս, բանաստեղծ Էննոդիոյի չափածո երկում գտնում ենք վկայություն մի հայի մասին, որն իր անժամանակ նահատակված որդու հիշատակին Ուջելլո կոչված մի վայրում, հավանաբար Պավիայի կամ Միլանի շրջանում, մկրտարան է կառուցում[4]։ Ատիլիո Պրակկին իր՝ կաթողիկեներից (կաթեդրալներից) Մայր տաճարների (դուոմոների) վերածված եկեղեցիներին վերաբերող ուսումնասիրության մեջ ենթադրում է, որ Միլանի Դուոմոյի մեջ նախքան Ժ. դարը եղել է սրբավայր՝ նվիրված Լոմբարդիայում մեծ հեղինակություն վայելող Սուրբ Վլաս Հային[5]։ Հյուսիսում նա հռչակված էր որպես ուխտավորների, հալածյալների, հիվանդների հովանավոր, որին վերագրվում է բազմաթիվ հիվանդանոցների բացումը։ Սուրբ Վլասին եւ նրան նվիրված եկեղեցու մասին ուսումնասիրության պատմությունը Վ. Փամբակյանը համարում է հայ համայնքի եւ հայ վանականների գործունեության ամենավառ ապացույցը[6]։

Հայ վանականների ազդեցիկ ներկայությունը առհասարակ Իտալիայում, մասնավորապես Միլանում, Հյուսիսային մայրաքաղաքում առաջացրել են առանձնակի հետաքրքրություն թե՛ հայերենի, թե՛ հայագիտության նկատմամբ։ Հետաքրքիր է, որ Ժէ. դարասկզբին իտալացի հասա-

---

[2] Խ. Մուշեղյան, *Հայաստանի դրամական գանձերը, Երեւան, 1973, էջ 101։*

[3] *Տես* A. Ceresa Mori, Le colonne di San Lorenzo, storia e restauro di un monumento, Modena, 1989, *էջ 23, 48։*

[4] *Տես* P. Toesca, La pittura e la miniature in Lombardia, dai piu antichi monumenti alla meta del Quattrocento, Milano, 1913, *էջ 9։*

[5] *Տես* A. Pracchi, La cattedrale antica di Milano,Roma-Bari, 1996, *էջ 350–355։*

[6] *Տես* V. Pambakian, Testimonianze della presenza Armenia nel Milanese, *էջ 190։*

րակության համար Կարդինալ Ֆեդերիկոն կազմակերպել է հայերենի եւ հայագիտության դասեր[7]։

Ի. դարասկզբի մեկ այլ գիտնական՝ Պիետրո Տոեսկան իր ուսումնասիրություններում հաստատում է Միլանի եւ շրջակա տարածաշրջանի ճարտարապետական առնչությունը հայ արվեստի հետ՝ զուգահեռներ տանելով հայկական եկեղեցիների միջնադարյան գավիթների եւ Միլանից ոչ հեռու գտնվող Կազալե Մոնֆերրատիի Սանտ Եւազիո եկեղեցու (Ը. դար) նախամուտքի ճարտարապետական լուծումների միջեւ։ Այդ հարցին անդրադարձել է նաեւ մեր օրերի հետազոտող Կարլո Տոսկոն[8]։ Խոսքը վերաբերում է Պյեմոնտի համար բացառիկ օրինակին՝ եկեղեցու ներսում առկա գավիթին։ Նույնիսկ կա ենթադրություն այն մասին, որ եկեղեցու ճարտարապետը եղել է գերեվարված սարացին (արեւելքցի) [նկ. 1]։

Հայ-իտալական ճարտարապետական առնչությունների շրջանակում բազմաթիվ են թե՛ հայ եւ թե՛ իտալացի գիտնականների ուսումնասիրությունները։ Լոմբարդիայի տարածաշրջանում առավել արժանի է հիշատակման Ս. Ջեւահիրջյանի՝ Միլանի կենտրոնագմբեթ խաչաձեւ եկեղեցիների տեսակին պատկանող Սան Սատիրո եկեղեցու՝ հայկական ճարտարապետությունից ազդվելու հանգամանքը[9]։ Կլաուդիա Բոնարդին եւս գտնում է, որ ԺԱ. դարի Միլանի հանրահայտ Սան Սպիրիտո եկեղեցին կապված է հայերի անվան հետ[10]։ Այս պնդման հավանականությունը կարելի է տեսնել կրոնական իրադարձությունների հաջորդականության մեջ. ԺԱ. դարի կեսերին իր վաթսուն հետեւորդների հետ Միլան է այցելում մի հայ հոգեւորական։ Նրանց տրամադրվում է Սուրբ Դիոնիսիոս եկեղեցին[11], որը տեւական ժամանակ նպաստում է համայնքային կյանքի կազմակերպմանը[12]։ Ըստ պատմագրության՝ Միլանում եկեղեցական արարողություններին հայ վանականների մասնակցությունը հիշատակ-

---

[7] *Տե՛ս* G. Bolegnesi, Milan et les Armenians, Atti del terzo Simposio internazionale di arte armena,Centro Studi e Documentazione della Cultura Armena, Milano, Venezia, San Lazzaro 1981, *էջ 63։*

[8] *Տե՛ս* C. Tosco, L' arte armena a Milano, nuove ipotesi sui contatti tra Oriente e Occidente, Gli Armeni lungo le strade d'Italia, Atti del Convegnio Internazionale, 1997, La Morra, 2013, *էջ 94։*

[9] *Տե՛ս* S. Djevahirjian, Les reminiscenes, de l'architecture armenienne en Occdent, Bazmavep, CXXXIV, 1976, *էջ 157–159, 268–289։*

[10] *Տե՛ս* C. Bonardi, Roma–Armenia, Vaticano, *1999, էջ 223։*

[11] *Տե՛ս* L. Zekian, Le Colonne Armene del Medio Evo in Italia e le realazioni culturali italo-armene, Atti del Terzo Simposio internazionale di arte Armena, Milano, Venezia, San Lazzaro, 1984, *էջ 47։*

[12] *Տե՛ս* C. Bonardi, Roma–Armenia, Vaticano, 1999, *էջ 223։*

վում է դեռեւս 1348 թվականից[13], իսկ արդեն նույն դարավերջում հայերն իրենց արարողություններն անցկացրել են Միլանի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, որ կրել է Կոզմա եւ Դամիանո սրբերի անունները։ Եկեղեցին գոյություն ուներ մինչեւ 1920 թ., որից հետո քանդվել է [նկ. 2]։

Հայկական հետք տեսանելի է նաեւ Միլանից ոչ հեռու գտնվող Պավիա քաղաքի Սանտա Ջուստինա եկեղեցում, որը գործում էր մինչեւ 1799 թվականը, երբ Նապոլեոնը հրամայում է սահմանափակել հոգեւոր կառույցների գործունեությունը[14]։ Դիտելի է, որ 1755 թվականին Անտոնիո Ջուզեպպե Սասսոն Միլանի Ամբրոսյան միաբանության պատմությունը շարադրելիս օգտվել է Միլանի հայկական եկեղեցում պահպանված՝ 1467 թ. թվագրված քաղաքի ամենահին քարտեզից։ Այս եւ հարակից տեղեկություններից պարզ է դառնում, որ ԺԸ. դարի կեսերին Միլանում գործել է հայկական համայնք՝ սեփական եկեղեցիով, մեծ ու հարուստ գրադարանով, որի պահոցներում տեղ էին գտել քաղաքի պատմության հետ առնչվող կարեւոր փաստաթղթեր[15]։

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Ի. դարն ազդարարվեց Իտալիայում հայերի բնակեցման նոր ալիքով, ինչն ուներ իր պատմաքաղաքական պատճառները։ Մեկ հարյուրամյակի ընթացքում Միլանում Հայկական ներկայության մեծ աճ է արձանագրվում։ Ի. դարասկզբի փոքրիկ գաղութը՝ կազմված մանածագործության ոլորտում գործող մի քանի վաճառականներից, անընդհատ հարստանում է նոր մարդկանցով՝ փախստականներով, ընտանիքներով, մասնագետներով, որբերով։ 1950 թ. համայնքը օրինականացվում է եւ ձեռք է բերում մի քանի ներկայանալի գույք քաղաքային հյուսվածքի ներսում։ Միլանի քարտեզի վրա կարմիրով նշված են քաղաքի հայկական հիմնական ներկայությունները Ի. դարում [նկ. 3]՝ via Gommelli, *եկեղեցի (1958 թ.) [նկ. 4] (Ի. դարի առաջին կեսին Միլանում հայերը կրոնական արարողություններ էին կատարում Սոլֆերինո անգլիական եկեղեցում։ 1951 թ.*

---

[13] Թ. ՎՐԴ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, *Իտալիայի պատմական հայկական եկեղեցիները, Իտալիայի հայ սրբերը, նշանավոր հայերը, վարդապետական թեզ, անտիպ, Մայր Աթոռ Էջմիածին, 2015, 92 էջ։*

[14] *Տե՛ս* P. MONTONATI, Le chiese scomparsi di Pavia dentro le mura,-http:// paviafree. It /storia le chiese- scomparse- di- pavia-dentro- le-mura-2-parte.html

[15] Թ. ՎՐԴ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, *նշ. աշխ.։*

հունվարի 14-ին օրհնվում է հայկական եկեղեցու շինարարության սկիզբը ազդարարող առաջին քարի տեղադրումը Carducci *փողոցի վրա, սակայն հետո տեղափոխվում է* Gommelli *փողոց), «Հայկական տունը» Վելասկա 4 հրապարակի վրա (1953 թ.), Մխիթարյանների ուսանողական նստավայրը* Viale Umbria 62 *(1925–1932 թթ.) [նկ. 5], Բեռնարդինո Լուինիի խաչքարը* Arciologico *թանգարանում (1990 թ.) [նկ. 6], Բովիսայի* "Armenia Films" *լաբորատորիայի մուտքի կամարը (1916 թ.),* La via Armenia, viale Certesa-*ի խաչմերուկ դեպի* Accursio *հրապարակ (1940 թ.)*[16]*։*

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԵՏՔԸ ՄԻԼԱՆՈՒՄ

Հայկական Կոլեջ Վիալե - Ումբրիա: *Մուսոլինիի կառավարությունը Միլանում հայերին է նվիրաբերում մի մեծ ազնվական շենք, որ շուրջ տասը տարի՝ 1920–1930 թթ. ժամանակահատվածում, մխիթարյան հայրերն օգտագործել են իբրեւ քոլեջ-մանկատուն։ Այստեղ ընդունում էին եղեռնից մազապուրծ որբերին եւ արհեստ սովորելու նպատակով Իտալիա տեղափոխված հայ երիտասարդներին։ Հաստատությունը համայնքային հանդիպումների եւ միջոցառումների վայր էր։ Երբ քոլեջն արդեն չի ծառայում իր հիմնական նպատակին, փակվում է, իսկ շենքը հետագայում վաճառվում է Միլանի ոստիկանությանը։*

Հայ տունը Վելասկայի հրապարակում: *Երկրորդ համաշխարհայինի նախօրեին Իտալիայում ստեղծվում է Հայոց միությունը, որի կանոնադրությունը պաշտոնապես վավերացնում է Իտալիայի կառավարությունը։ Մինչ 1953 թ. Միլանի հայկական համայնքի ամբողջ գործունեությունը՝ հոգեւոր, քաղաքական, մշակութային, անցկացվել է անհատույց տրամադրված կամ վարձակալությամբ տրված տարածքներում։ Այդ անհարմար կացությանը վերջ տալու նպատակով ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որը պետք է զբաղվեր սեփական տարածք ձեռք բերելու համար դրամային հանգանակության հարցերով։ Տարածքը ձեռք է բերվում քաղաքի կենտրոնում, Միլանի տաճարի անմիջական հարեւանությամբ, Վելասկա հրապարակում գտնվող բարձրահարկ շենքի երրորդ հարկում։ Հարկաբաժինը ներառում է նիստերի դահլիճ, գրասենյակ, գրադարան, խոհանոց։ Այստեղ են անցկացվում ազգային եւ մշակութային միջոցառումներ, զանազան հանդի-*

[16] *Տես* A. Manoukian, Presenza Armenia in Italia 1915–2000, Cuerini e assciati, Milano 2014, *էջ 39–41։*

պումներ։ Մանուկների համար կազմակերպվում են հայերենի դասընթացներ։ Իսկ գրադարանում պահվում էին գրքերի հարյուրավոր հատորներ, ամսագրեր, թերթեր, հրատարակություններ Հայաստանից եւ սփյուռքից[17]։

Միլանի Սուրբ Քառասուն մանկունք եկեղեցին։ *Իտալիայի առաքելական հոգեւոր հովվությունը ձեւավորվել է Միլանում 1955 թ., երբ պետական իշխանությունները ճանաչում են իրենց երկրում Հայ Առաքելական եկեղեցու դավանանքին պատկանող հավատացյալների համայնքը եւ թույլատրում են եկեղեցու կառուցումը։ Այդ ժամանակահատվածը համընկնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընթացող մի նոր երեւույթի հետ։ Վազգեն Առաջին կաթողիկոսի գահակալության տարիները նշանավոր վեցին սփյուռքում եկեղեցաշինության նոր ալիքով։ 1915 թվականից, Առաջին եւ Երկրորդ աշխարհամարտերից հետո վերջապես ոտքի կանգնած հայկական գաղութները ցանկանում էին ունենալ իրենց հոգեւոր կենտրոնները։ Տարբեր մայրցամաքներում կառուցված եկեղեցիները իրենց մկրտությունը ստանում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ ենթարկվելով Մայր Աթոռին առընթեր մասնագիտական ճարտարապետական խորհրդի հատուկ հսկողությանը [նկ. 7]։*

Կառուցման նախապատմությունը։ *Միլանի Հայոց Սուրբ Քառասուն Մանկանց եկեղեցու շինության նախագիծը սփյուռքում կառուցվող եկեղեցիներից առաջին էր, որ մշակվեց Մայր Աթոռի աջակցությամբ*[18]։ *Եկեղեցու նախագծի նախնական մշակումը վստահվել էր նշանավոր ճարտարապետ Ռ. Իսրայելյանին։ Ուսումնասիրելով մեր միջնադարյան կոթողները, ինչպես նաեւ հաշվի առնելով այն մշակութային միջավայրը, որտեղ պետք է կառուցվեր ապագա եկեղեցին՝ հեղինակը կիրառում է ավանդական ճարտարապետական լուծումներ, նրանց տալիս նոր մեկնություններ։ Հավանաբար, Միլանի քաղաքապետարանում ընդունված կանոնակարգի համաձայն՝ եկեղեցու նախագծմանը մասնակցում է նաեւ իտալացի ճարտարապետ Սուրեանը, եւ շուտով, նախագիծը, որոշ փոփոխությունների ենթարկվելով, իրականացվում է։*

Միլանի Սուրբ Քառասուն Մանկանց եկեղեցին կառուցվել է արգենտինահայ Հովհաննես եւ Սարգիս Դիարբեքիրյան եղբայրների նվիրատ-

---

[17] *Տե՛ս* G. Casnati, Gli Armeni in Italia, Presenze armene in Italia.Testimonianze storiche ed architettoniche, Venezia, San Lazzaro, Padova, Museo al Santo, De Luca Edizioni d' Arte, 1990, *էջ 36–38։*

[18] Վ. Հարությունյան, *Եկայք Շինեսցուք, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1987, էջ 122։*

վությամբ։ Եկեղեցու շինարարությանը նախորդում է մի գործընթաց, որի ընթացքում եղբայրները նվիրաբերում են իրենց եկեղեցին Միլանի հայկական համայնքին։ Հողակտորը գնվել էր քաղաքի կենտրոնում, Carducci *փողոցում։ Սակայն նախնական ձեւակերպումներից հետո, երբ պաշտոնապես դրվեց առաջին քարը, քաղաքային մարմինները կանգնեցրին շինարարությունը։ Պատճառը հայկական ոչ կաթոլիկ եկեղեցու հարեւանությունն էր Միլանի հովանավոր Սուրբ Ամբրոսիոսի եկեղեցուն*[19]*։ Բազմաթիվ փորձերից հետո վերջապես վերսկսվում է եկեղեցու շինարարությունը, բայց արդեն Միլանի մեկ այլ շրջանում՝* via Gommelli *փողոցում։ 1958 թ. սեպտեմբերի 15-ին եկեղեցին օծում է Կոստանդնուպոլսի պատրիարքը։ Եկեղեցին նվիրվում է Սուրբ Քառասուն Մանկանց, ի հիշատակ նախաձեռնող եղբայրների ծնողների՝ Զարուհի եւ Մանուկ Դիարբեքիրյանների։ Հայկական համայնքը եւ պաշտամունքը պաշտոնապես ճանաչում է Իտալիայի նախագահը, եկեղեցու բակում տեղադրվում է հայկական միջնադարյան խաչքար [նկ. 8]։*

Հատակագծային եւ ծավալատարածական հորինվածքը։ *Սուրբ Քառասուն Մանկանց եկեղեցին պատկանում է կենտրոնագմբեթ եկեղեցիների տեսակին։ Եկեղեցին ունի հատակագծային արեւելք-արեւմուտք ուղղությամբ ձգվածություն, գլխավոր մուտքը արեւմտյան կողմից է։ Աղոթասրահն արեւելյան կողմում ավարտվում է կիսաշրջանաձեւ Ավագ խորանով։ Արտաքինից խորանը նույնպես կիսաշրջանաձեւ է։ Խորանի երկու կողմերում հյուսիսային եւ հարավային ավանդատներն են, որոնք արտաքին դռներով հաղորդակցվում են բակի հետ։ Ներսում դրանք դռներով կապված են ավագ խորանի հետ։ Աղոթասրահից մեկ աստիճան բարձրության վրա, Ավագ խորանի դիմաց է գտնվում Դասը։ Դասից դեպի Ավագ խորան բարձրանում են աստիճաններ, ինչով շեշտվում է եկեղեցու ընդհանուր համաչափությունը երկայնական առանցքի նկատմամբ [նկ. 9]։*

Աղոթասրահի կենտրոնում են կառուցված քառակուսի հատույթով չորս գմբեթակիր սյուները։ Գմբեթակիր քառակուսուց դեպի շրջանաձեւ թմբուկ անցումն իրականացված է առագաստների միջոցով։ Գմբեթատակ չորս սյուները դեպի հյուսիսային եւ հարավային պատերը, ինչպես նաեւ դեպի արեւելք եւ արեւմուտք, կամարաձեւ անցումներով կապված են վե-

---

[19] *Տես* A. Manoukian, Presenza Armenia in Italia 1915- 2000, Cuerini e assciati, Milano 2014, *էջ 39–41։*

բոհիշյալ պատերի վրա գտնվող որմնասյուների հետ: Եկեղեցու գմբեթի թմբուկը թե՛ ներքուստ, թե՛ արտաքուստ գլանաձեւ է, վեղարը՝ կոնաձեւ: Եկեղեցու լուսամուտները կամարակապ են, երկարաձիգ համաչափությամբ: Դա վերաբերվում է նաեւ գմբեթի թմբուկի վրայի լուսամուտներին: Եկեղեցու խորանն ունի երկու, իսկ կողային ճակատները հինգ բացվածք, որոնք մեկընդմեջ պսակված են քանդակազարդ կամարաղեղներով:

Եկեղեցին ունի սյունազարդ շքամուտք՝ շեշտված երկլանջ բաց նախասրահով (բաց նախամուտքով), որը կամարով արեւմտյան կողմում հենված է երկու զույգ սյուների վրա, իսկ հյուսիսային եւ հարավային կողմում՝ կամարով միանում է ճակատային պատին կից մեկական սյուներին [նկ. 10, 11]:

Եկեղեցին իր ամբողջ մակերեսով ունի նկուղային հարկ, որի մուտքերը բացվում են արեւելյան կողմից: Առաջին մուտքը՝ ավագ խորանի հետնամասից է, երկրորդը՝ հյուսիսային ավանդատան դրսի հատվածից:

Եկեղեցու մուտքը շրջակա տարածքի մակերեւույթից բարձր է վեց աստիճանով, չորսը՝ փողոցի նիշից մինչեւ նախամուտք, եւ երկուսը՝ նախամուտքի հարթակից մինչեւ եկեղեցու հատակը: Դա հնարավորություն է ստեղծել ունենալու հնարավորինս բարձր առաստաղով, օգտագործելի նկուղային հարկ: Տարբեր տարիներին (2008 թ., 2012 թ.) կատարված շինարարական աշխատանքների արդյունքում, երբ հոգեշնորհ Թովմա Վարդապետ Խաչատրյանի (2012–2019) օրհնությամբ վերականգնվեց եկեղեցու ջրահեռացման համակարգը, հնարավոր դարձավ նկուղային հարկի օգտագործումը՝ ի նպաստ եկեղեցու եւ համայնքի կարիքների: Ստորգետնյա հատվածի բնական լուսավորությունը ապահովելու նպատակով եկեղեցու հատակի նիշը ընդհանուր տարածքի բարեկարգման նիշից բարձրացված է 90–100 սմ չափով: Գետնախարիսխի վրայի հյուսիսային եւ հարավային ճակատներում իրականացված բացվածքների օգնությամբ հնարավոր է դառնում ապահովել նկուղի բնական լուսավորությունն ու օդափոխությունը, այնտեղ գտնվող ամբողջ տեխնիկական եւ ճարտարագիտական սպասարկման տարածքը: Այժմ այստեղ են տեղավորված հանդիպումների սրահը, գրասենյակը, պահոցները, փոքր խոհանոցը: 2020 թվականի վերջերին, օրհնությամբ հոգեշնորհ Տիրայր վարդապետ Հակոբյանի (2019–2022), այստեղ հիմնադրվել է կիրակնօրյա դպրոց, որտեղ կազմակերպվում են մանուկների համար կիրակնօրյա դասընթացներ [նկ. 12]:

Շինարվեստը եւ գեղարվեստական հարդարանքը։ *Եկեղեցին կառուցված է քարե գետնախարսխի վրա, թե՛ ներսից, թե՛ դրսից պատերը սվաղված են։ Արտաքին ճակատները սվաղված են քարե շարվածքը կրկնող նկարվածքով։ Եկեղեցու շքամուտքը, սյուները եւ որմնասյուները երեսապատվել են մարմարե սալիկներով, դրսինը՝ լուսավոր, բաց երանգի, ջլավորված նկարվածք ունեցող մարմարով, ներսինը՝ ավելի մուգ եւ ջլավոր երակավոր մարմարով։ Բեմը, սուրբ սեղանը եւս մարմարապատ են։ Հատակը երեսապատված է բաց եւ մուգ մարմարյա սալերով։ Եկեղեցին ունի փայտե բազրիքով դաս, հյուսիսային մասում՝ քարեղեն մկրտության ավազան։ Սյուները եւ որմնասյուները պսակված են քարե քանդակազարդ խոյակներով, իսկ շքամուտքի սյուները՝ զամբյուղաձեւ քանդակազարդ խոյակներով [նկ. 13]։*

Գլխավոր մուտքը երիզված է եկեղեցու անունը կրող կամարաձեւ արձանագրությամբ։ Ճակատային հատվածում դաջված է եկեղեցու ազգապատկանելիությունը ցույց տվող գրառում։ Մուտքի ճակտոնը զարդարված է երկկողմ անկյունային հատվածներում խորհրդանշական քառակուսի զարդանախշային վարդյակներով։ Ճակատի կենտրոնական հատվածում՝ առաքելական խաչ է՝ ամփոփված թռչնաքանդակների միջեւ։ Եկեղեցու քիվերի ստորին երիզը հարդարված է հյուսածո ժապավենաձեւ զարդաքանդակով, ճակատային հատվածում նրանք եզրափակվում են քառատերեւ ծաղկազարդով (վարդյակներով)։ Նույն ոճով են հարդարված նաեւ պատուհանների կիսաշրջան կամարաղեղները։ Բոլոր լուսամուտները երիզված են ելուստավոր նեղ երիզագոտիներով։ Ճակատի միջնամասում եկեղեցին գոտեւորված է հորիզոնական զարդագոտիով՝ հարդարված շուշանաձեւ բուսազարդով [նկ. 14]։

Եկեղեցու դռները եւ՛ ներսից եւ՛ դրսից փայտյա են։ Դրսի հանդիսավոր դռան փայտյա փեղկերը փորագրազարդ են եւ պատկերում են հայկական միջնադարյան ճարտարապետության նշանավոր եկեղեցիները։ Եկեղեցու լուսամուտների բացվածքներին տարածաշրջանին բնորոշ բազմագույն ապակենկարներ են՝ սրբապատկերների, եկեղեցուն վերաբերվող պաշտամունքային նշանակության դրվագների պատկերումներով։

Գերակշռում է լատին եկեղեցուն բնորոշ կապույտ գույնը։ Եկեղեցու տանիքները եւ վեղարը թիթեղապատ են, ջրահեռացումը իրականացվում է երկու եղանակով՝ ներքին եւ արտաքին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

1. Հայկական հետքը Լոմբարդիայում ունի իր տարեգրությունը։ Նա մաս է կազմում հայագիտական պատմամշակութային եւ ճարտարապետական առնչությունների շղթայի՝ հիմքում ունենալով միջպետական հարաբերությունները, պատմական իրադարձությունները, մարդկային շփումները։ Այն պարբերացվում է հետեւյալ շրջաններով՝

ա. Նախաքրիստոնեական եւ վաղքրիստոնեական շրջան (Բ.–Է. դարեր)։

բ. Միջին դարեր (ԺԱ.–ԺԷ. դարեր)։

գ. Նորագույն ժամանակաշրջան (Ի. դար)։

2. Լոմբարդիայում հայկական ներկայությանն առնչվող պատմամշակութային եւ ճարտարապետական հետքերը բովանդակային առումով կարելի է բաժանել երեք խմբի՝

ա. Հնավավեր նմուշների տեսքով՝ արձանագրություններ, հատած մետաղադրամներ, չափածո տողեր եւ այլն։

բ. Հայ եւ իտալացի գիտնականների ուսումնասիրությունները՝ կապված հայ-իտալական պատմամշակութային եւ ճարտարապետական առնչությունների հետ։

գ. Հայերի կառուցած կամ պատմական որեւէ շրջափուլում նրանց օգտագործած կառույցները, որոնցից կարեւորագույնը Ի. դարի կեսերին Միլանում կառուցված Սուրբ Քառասուն մանկունք առաքելական եկեղեցին է։

3. Սուրբ Քառասուն մանկունք առաքելական եկեղեցին իր ճարտարապետական ձեւակերտման հիմքում որպես առանձնահատկություն կրում է ժառանգականությունը՝ այն 1915 թվականից հետո կառուցված եկեղեցիների օրինակ է եւ նկատելի զուգահեռներ ունի Գյումրիի Ս. Նշան, Թբիլիսիի Ս. Գեւորգ, Երեւանի Ս. Սարգիս եկեղեցիների հետ, սակայն նրա ճարտարապետական եւ գեղագիտական ձեւակերտման հիմքում ակնհայտ է նաեւ կառույցը պատմական միջավայրին հարմարեցնելու փորձը։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Լոմբարդիա, հայկական հետք, Ս. Գեւորգ, Ս. Սարգիս։

РЕЗЮМЕ

В статье рассматриваются хронологические этапы присутствия армян на севере Италии, а также историко-культурные и материальные свидетельства, связанные с этим присутствием, включая каменные надписи, чеканенные монеты, поэтические тексты и исследования армянских и итальянских ученых, в том числе работы, посвященные армяно-итальянским архитектурным взаимосвязям.

Исследование выполнено с использованием историко-документального метода. Появление армян в Ломбардии анализируется как фактор, способствовавший дальнейшим историческим и политическим миграционным процессам. Научная задача статьи заключается в систематизации, обосновании и документировании ряда объектов, связанных с армянским наследием или имеющих отношение к армянам, появившихся в Милане в начале XX века в результате миграционных процессов.

Особое внимание уделяется наиболее значимому из них – Армянской Апостольской Церкви Сорока Святых Мучеников, единственному храму Армянской Апостольской Церкви в Италии.

Архитектурный анализ здания проведен в контексте исторических событий XX века, с учетом общественного резонанса, вызванного его строительством. Выявлены конструктивные принципы, характерные для средневековой армянской церковной архитектуры, а также рассмотрены архитектурные и эстетические решения, адаптированные к конкретной исторической среде.

SUMMARY

This article examines the chronological stages of the Armenian presence in northern Italy, as well as the historical, cultural, and material evidence associated with it, including stone inscriptions, minted coins, poetic texts, and scholarly works by both Armenian and Italian researchers, particularly those dedicated to Armenian-Italian architectural interconnections.

The study employs a historical-documentary methodology to analyze the appearance of Armenians in Lombardy as a factor that contributed to subsequent historical and political migratory processes. The scholarly objective of the article is to

Նկ. 1. Կազալե Մոնֆերատտի Սանտ Եւազիո եկեղեցի

Նկ. 2. Ս. Ս. Կոսմա եւ Դամիանոյի եկեղեցին ֆանդումից առաջ, լուս. Բ. Լ. Ջեֆիյանի

Նկ. 3. Հայկական ներկայությունը Միլանի քարտեզի վրա, Ա. Մանուկյան, «Presenza Armena in Italia», 1915—2000 թթ.

Նկ. 4. Ջիոմելլի փողոցի վրա Ս. Քառասուն մանկանց եկեղեցի, լուս. Լ. Մամյանի

Նկ. 5. Մխիթարյան հայրերի ուսանողական նստավայրը, լուս. Գ. Կազնատի

Նկ. 6. Հնագիտական թանգարանին 1981 թ. նվիրաբերված խաչքար, լուս. Գ. Կազնատի

Նկ. 8. Եկեղեցու բակում տեղադրված միջնադարյան խաչքար, լուս. Գ. Կազնատի

Նկ. 7. Միլանի Հայ Առաքելական Ս. Քառասուն մանկանց եկեղեցին, լուս. Լ. Մամյանի



Նկ. 9. Ս. Քառասուն մանկանց եկեղեցու հատակագիծը, 1958 թ., Ջիորգետի արվեստանոց





Նկ. 10, 11. Ս. Քառասուն մանկանց եկեղեցու կտրվածքի եւ ճակատների գծագրեր, 1958 թ., Ջիորգետի արվեստանոց

Նկ. 12. Եկեղեցու նկուղային հարկի մուտքն ու տարածքը, լուս. Լ. Մամյանի

Նկ. 13. Եկեղեցու ներսույթը,
լուս. Լ. Մամյանի

Նկ. 14. Եկեղեցու արտաքին հարդարանքը, լուս.՝ Լ. Մամյանի

systematize, substantiate, and document a number of sites associated with Armenian heritage or related to Armenians that emerged in Milan in the early 20th century as a result of migration.

Particular attention is given to the most significant of these sites–the Armenian Apostolic Church of the Forty Martyrs, the only Armenian Apostolic church in Italy.

The architectural analysis of the building is conducted within the broader context of 20th-century historical events, taking into account the public response to its construction. The study identifies structural principles characteristic of medieval Armenian ecclesiastical architecture and examines the architectural and aesthetic solutions adapted to the specific historical environment.